

Կ-049²-03.07.2017-ՏՏԳԲ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Պետական վերահսկողության շրջանակներում՝ լիազոր մարմնի կողմից իրականացվող անասնաբուժասանիտարական պետական փորձաքննության հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգերի դրույթները»:

Հոդված 2. 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«**կենդանական ծագման մթերք՝** գյուղատնտեսական կենդանիների սպանդից գոյացած և չվերամշակված մսեղիքը, կիսամսեղիքը, քառորդ մսեղիքը, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միսը, աղացած և ծեծած միսը, պոչը և դմակը, վերջույթները՝ նախաբազկի և սրունքի հողերից անջատված, ներքին օրգանները (յարդ, փայծախ, սիրտ, երիկամ, թոք, ըմպան, շնչափող, ստոծանի, թոչնի ստամոքս, որոճող կենդանիների կտրիչ), ենթամաշկային և ընդերային ճարպը, ուղեղը, արյունը, լեզուն, ամորձիները, գլուխը, կուրծը, ինչպես նաև չփաթեթավորված և չմակնշված մսամթերք, կաթ և կաթնամթերք, ձուկ և ձկնամթերք, երկկենցաղներ, սողուններ, խխունջներ, միջատներ, խեցգետնակերպեր, ցամաքային և ջրային այլ անողնաշարավորներ և դրանցից ստացված մթերք, չբեղմնավորված ձկնկիթ, սննդային ձու, բնական մեղր, որոնք առանց վերամշակման կամ վերամշակումից հետո օգտագործվում են սննդում կամ որպես պարենային հումք.»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին, 29.2-րդ և 29.3-րդ կետերով.

29.1) **մսեղիք՝** սպանդի կամ մորթի ենթարկված կենդանու ամբողջական մարմինը առանց մաշկի, գլխի, վերջավորությունների ստորին հատվածների և ներքին օրգանների.

29.2) **կիսամսեղիք՝** մսեղիքի ողնաշարի երկարությամբ հավասարաչափ հատվածների բաժանած մասերը.

29.3) **քառորդ մսեղիք՝** մսեղիքի չորս մասի բաժանած հատվածները.»::

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) վերամշակել (մշակել), իրացնել, վաճառել, մատակարարել, ներմուծել բացառապես սպանդանոցում կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման մթերք և կենդանական ծագման հումք, բացառությամբ՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամանակացույցով նախատեսված դեպքերի.».».

2) ուժը կորցրած ճանաչել 7-րդ կետը:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Կենդանիների սպանդի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) անձնական սպառման համար, եթե տվյալ կենդանին ենթարկվել է սահմանված հակաանասնահամաճարակային միջոցառումների:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՆԱՍՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-137-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Պետական վերահսկողության շրջանակներում՝ լիազոր մարմնի կողմից իրականացվող անասնաբուժասանիտարական պետական փորձաքննության հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված անասնաբուժասանիտարական փորձաքննության կարգերի դրույթները»:

Հոդված 2. 3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«27) կենդանական ծագման մթերք՝ **գյուղատնտեսական** կենդանիների սպանդից գոյացած չվերամշակված մսեղիքը, կիսամսեղիքը, ~~մսեղիքը~~, քառորդ **մսեղիքը**, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միսը, աղացած ~~և մսի~~, ձեռած **միսը և դրանցից ստացված կիսապատրաստվածքները**, պոչը և դմակը, **վերջույթները՝ նախաբազկի և սրունքի հողերից անջատվածը**, ~~պարենքի մատուցները~~ օրգանները (յարդ, փայծախ, սիրտ, երիկամ, թոք, ըմպան, շնչափող, ստոծանի, թոչնի ստամոքս, որոճող կենդանիների կտրիչ), ենթամաշկային և ընդերային ճարպը, ուղեղը, արյունը, լեզուն, ամորձիները, գլուխը, կուրծը, ինչպես նաև չփաթեթավորված և չմակնշված՝ մսամթերք, կաթ և կաթնամթերք, ձուկ և ձկնամթերք, երկկենցաղներ, **սողուններ, խխունջներ, միջատներ**, խեցգետնակերպեր, **կակղամորթներ**, ցամաքային և ջրային **այլ** անողնաշարավորներ և դրանցից ստացված մթերք, չբեղմնավորված ձկնկիթ, ~~սննդային~~ **և** ձու, **բնական** մեղր, որոնք առանց վերամշակման կամ վերամշակումից հետո օգտագործվում են սննդում կամ որպես պարենային հումք.»:

Հոդված 3. Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 29.1-ին, 29.2-րդ և 29.3-րդ կետերով.

«29.1) մսեղիք՝ սպանդի կամ մորթի ենթարկված կենդանու ամբողջական մարմինը առանց մաշկի, գլխի, վերջավորությունների ստորին հատվածների և ներքին օրգանների.

29.2) կիսամսեղիք՝ մսեղիքի ողնաշարի երկարությամբ հավասարաչափ հատվածների բաժանած մասերը.

29.3) քառորդ մսեղիք՝ մսեղիքի չորս մասի բաժանած հատվածները.»::

Հոդված 4. Ուժը կորցրած ճանաչել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետը:

Հոդված 5. Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասում.

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) վերամշակել (մշակել), իրացնել, վաճառել, մատակարարել, ներմուծել բացառապես սպանդանոցում կենդանիների սպանդից գոյացած կենդանական ծագման մթերք և կենդանական ծագման հումք, բացառությամբ՝ սույն օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 1-6-րդ կետերով սահմանված, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված ժամանակացույցով նախատեսված դեպքերի.».».

2) ուժը կորցրած ճանաչել 7-րդ կետը:»:

Հոդված 6. Օրենքի 38-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ մասով.

«4. Կենդանիների սպանդի կիրառման ոլորտները և ժամանակացույցը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 7. Օրենքի 40-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«6) անձնական սպառման համար, եթե տվյալ կենդանին ենթարկվել է սահմանված հակաանասնահամաճարակային միջոցառումների:»:

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-049¹-03.07.2017-SSԳԲ

Կ-049²-03.07.2017-SSԳԲ

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՄՆԱԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ԱՆԱՄՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՍՏԱՅՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը.	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.
ՀՀ Ազգային ժողովի ՀՀԿ խմբակցություն	«Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի Հոդված 2.3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.«27) կենդանական ծագման մթերք՝ կենդանիների սպանդից գոյացած չվերամշակված մսեղիքը, կիսամսեղիքը, մսեղիքը, քառորդը, տեսակավորված ոսկրոտ և անոսկր	1. «Անասնաբուժության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագծի Նախագծի 2-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3-րդ հոդվածի 1-ին մասի 27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «27) կենդանական ծագման մթերք՝ գյուղատնտեսական կենդանիների սպանդից գոյացած չվերամշակված մսեղիք,	ընդունվել է	ընդունվել է

	<p>միսը, աղացած մսի, ծեծած մսի և դրանցից ստացված կիսապատրաստվածքները, պոչը և դմակը, նախաբազկի և սրունքի հոդերը, պարենքիմատոզ օրգանները, ենթամաշկային և ընդերային ճարպը, ուղեղը, արյունը, լեզուն, ամորձիները, գլուխը, կուրծը, ինչպես նաև չփաթեթավորված և չմակնշված՝ մսամթերք, կաթ և կաթնամթերք, ձուկ և ձկնամթերք, երկկենցաղներ, խեցգետնակերպեր, կակղամորթներ, ցամաքային և ջրային անողնաշարավորներ և դրանցից ստացված մթերք, չբեղմնավորված ձկնկիթ և ձու, մեղր, որոնք առանց վերամշակման կամ վերամշակումից հետո օգտագործվում են սննդում կամ որպես պարենային հումք.»: </p>	<p>կիսամսեղիքը,, քառորդ մսեղիքը, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միսը, աղացած մսի, ծեծած մսի և դրանցից ստացված կիսապատրաստվածքները, պոչը և դմակը, նախաբազկի և սրունքի հոդերը, ներքին օրգանները, ենթամաշկային և ընդերային ճարպը, արյունը, լեզուն, ամորձիները, գլուխը, ականջը, շրթունքը, կուրծը, ինչպես նաև չփաթեթավորված և չմակնշված՝ մսամթերք, կաթ և կաթնամթերք, ցամաքային և ջրային անողնաշարավորներ և դրանցից ստացված մթերք, ձուկ և ձկնամթերք, չբեղմնավորված ձկնկիթ, երկկենցաղներ, սողուններ, թռչնի ձու, մեղվի մեղր, որոնք առանց վերամշակման կամ վերամշակումից հետո օգտագործվում են սննդում կամ որպես պարենային հումք.»:</p>		
<p>ՀՀ կառավարություն բանավոր առաջարկություն</p>	<p>«<i>«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հոդված 2.</i> Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«15) տեղական արտադրության՝ սպանդից ստացված փաթեթավորված և մակնշված թարմ կամ պաղեցված կամ սառեցված սպանդային մթերքի</p>	<p>«<i>«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի Հոդված 2-րդ շարադրել հետևյալ խմբագրությամբ.</i></p> <p>«Հոդված 2. Օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել նոր 15-րդ, 16-րդ և 17-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.</p> <p>«15) տեղական արտադրության, սպանդից գոյացած և չվերամշակված, թարմ կամ պաղեցված կամ սառեցված, փաթեթավորված և մակնշված մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդ մսեղիքի,</p>	<p>ընդունվել է</p>	<p>ընդունվել է</p>

<p>(մսեղիք, կիսամսեղիք, մսեղիքի քառորդ, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միս, աղացած միս, ծեծած միս և դրանցից ստացված կիսապատրաստվածքներ, պոչ և դմակ, նախաբազկի և սրունքի հողեր, պարենքիմատոզ օրգաններ, ենթամաշկային և ընդերային ճարպ, ուղեղ, արյուն, լեզու, ամորձի, գլուխ) դեպքում սպանդանոցի անվանումը, սպանդի ամսաթիվը.</p> <p>16) տեղական արտադրության՝ սպանդից ստացված չփաթեթավորված և չմակնշված թարմ կամ պաղեցված կամ սառեցված սպանդային մթերքի (մսեղիք, կիսամսեղիք, մսեղիքի քառորդ, տեսակավորված ոսկրոտ և անոսկր միս, աղացած միս, ծեծած միս և դրանցից ստացված կիսապատրաստվածքներ, պոչ և դմակ, նախաբազկի և սրունքի հողեր, պարենքիմատոզ օրգաններ, ենթամաշկային և ընդերային ճարպ, ուղեղ, արյուն, լեզու, ամորձի, գլուխ) դեպքում՝ տեղեկատվական թերթիկում կամ ուղեկցող փաստաթղթում սպանդանոցի անվանումը, սպանդի ամսաթիվը.</p> <p>17) վերամշակման դեպքում կիսապատրաստվածքի և մսամթերքի մեջ նաև մսի տեղական</p>	<p>տեսակավորված ոսկրոտ և անոսկր մսի, աղացած և ծեծած մսի, պոչի և դմակի, վերջույթների՝ նախաբազկի և սրունքի հողերից անջատված, ներքին օրգանների (յարդ, փայծախ, սիրտ, երիկամ, թոք, ըմպան, շնչափող, ստոծանի, թոչնի ստամոքս, որոճող կենդանիների կտրիչ), ենթամաշկային և ընդերային ճարպի, ուղեղի, արյան, լեզվի, ամորձիների, գլխի, կրծի դեպքում՝ սպանդանոցի անվանումը, սպանդի ամսաթիվը.</p> <p>16) տեղական արտադրության, սպանդից գոյացած և չվերամշակված, թարմ կամ պաղեցված կամ սառեցված, չփաթեթավորված և չմակնշված մսեղիքի, կիսամսեղիքի, քառորդ մսեղիքի, տեսակավորված ոսկրոտ և անոսկր մսի, աղացած և ծեծած մսի, պոչի և դմակի, վերջույթների՝ նախաբազկի և սրունքի հողերից անջատված, ներքին օրգանների (յարդ, փայծախ, սիրտ, երիկամ, թոք, ըմպան, շնչափող, ստոծանի, թոչնի ստամոքս, որոճող կենդանիների կտրիչ), ենթամաշկային և ընդերային ճարպի, ուղեղի, արյան, լեզվի, ամորձիների, գլխի, կրծի դեպքում՝ տեղեկատվական թերթիկում կամ ուղեկցող փաստաթղթում նշվում է սպանդանոցի անվանումը, սպանդի ամսաթիվը.</p> <p>17) սպանդից գոյացած մթերքի վերամշակման դեպքում կիսապատրաստվածքի և մսամթերքի մեջ</p>		
--	---	--	--

	<p>արտադրության սպանդանոցային ծագման և/կամ ներմուծված լինելու մասին տեղեկատվությունը՝ բաղադրության մեջ տեղական արտադրության և ներմուծված մսի համամասնությամբ:»:</p>	<p>նաև՝ մսի տեղական արտադրության, սպանդանոցային ծագման և/կամ ներմուծված լինելու մասին տեղեկատվությունը՝ բաղադրության մեջ տեղական արտադրության կամ ներմուծված մսի համամասնությամբ:»:</p>		
--	---	---	--	--